

ՀՀ ռազմարդյունաբերության արտահանման ներուժի զարգացումը

Ռազմական արդյունաբերության (ՌԱ) զարգացումը մարտահրավեր է, որտեղ զինատեսակների ասպարեզում հակառակորդի նկատմամբ առավելության հասնելը խաղաղության պահպանման կարևորագույն հարցերից մեկն է և որն էլ առանց նոր տեխնոլոգիաների, նոր նյութերի օգտագործման և բարձրորակ կադրերի անհնար է պատկերացնել:

Իմ համոզմամբ Հայաստանում ՌԱ-ը պետք է սպառողի վիճակից անցնի շահութաբեր տնտեսության վիճակի դառնալով ընդհանուր տնտեսության զարգացման դրոշակակիրը:

Այս առումով ՌԱ զարգացման համապատասխան ճանապարհների ընտրությունը հանրապետության արդի խնդիրներից է:

Ելույթիս նպատակն է պարզաբանել նշված խնդրի հետ կապված մի տեսանկյուն ևս, հիմնավորել Հայաստանում ՌԱ-ն կայացնելու հնարավորությունը և անհրաժեշտությունը, տալ դրա բաղկացուցիչ մասերի զարգացման, խոչնդոտների հաղթահարման հնարավոր միջոցների վերաբերյալ դիտողություններ, պարզաբանել արդյունքների առևտրականացման հնարավոր ճանապարհները: Արդեն իսկ ստեղծված և կիրառվող համակարգերի օրինակների վրա, շեշտադրել ՌԱ ասպարեզում վստահ քայլեր կատարելու Հայաստանի հնարավորությունները, արտահանման ներուժի զարգացումը, տալ առաջարկներ դրա իրականացման ուղղությամբ և ցույց տալ սփյուռքի տեղը այդ հարցում:

Հայաստանը դատապարտված է ՌԱ ունենալու, որը մրցակցային պայմաններում պետք է ստեղծի պաշտպանական և հարձակողական միջոցներ, որոնք իրենց տեխնիկական պարամետրերով ոչ միայն չպետք է զիճեն հակառակորդի միջոցներին, այլ նաև գերազանցեն դրանց: Հենց դա հնարավորություն կնձեռնի խոսել դրանց առևտրայնացման մասին: Առևտրայնացման հիմնական նախադրյալներն են՝ առաջադրվող համակարգերի, սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը, դրանց աշխատանքային պայմանները, շահագործման պարզությունը և իհարկե գինը: Հարկ է նշել, որ այստեղ գինը ամենավերջին գործոնն է: Կա կարծիք, որ շրջափակման՝ տրանսպորտային ճանապարհների ընտրության բացակայության պայմաններում ապրանքների և ծառայությունների գները շատ են բարձրանում: Պետք է նշեմ, որ աշխարհում բարձր տեխնոլոգիական արտադրանքի մեջ, որի թվին է պատկանում ռազմական տեխնիկան, չկա էժան արտադրող և արտադրանք: Բարձր տեխնոլոգիական համակարգերի առևտրի մեջ էլ տրանսպորտային ծախսերը շատ փոքր ազդեցություն ունեն գնագոյացման վրա, որը միանշանակ ուղղում է զարգացման վեկտորը դեպի բարձր տեխնոլոգիական(ԲՏ) արտադրանքի և ՌԱ զարգացմանը: Որոշ ձեռնարկություններ (Ինկուբատոր հիմնադրամը, Նաթիոնալ Ինստրումենտը, Երևանի կապի միջոցների ԳՀԻ-ն

և ուրիշներ) զգալով ԲՏ դերը ստեղծել են պայմաններ, որ Հայաստանում զարգացումներ ապրեն ինժեներական՝ տեխնոլոգիական կենտրոնները Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Կապանում: Ամենամյա տեխնոլոգիական ցուցահանդեսները ցույց են տալիս երիտասարդության հետաքրքրության աճը դեպի ինժեներական խնդիրների լուծումը, նորարարությունը:

Աշխարհում առաջընթացը օբյեկտիվ իրողություն է և կախված չէ այս կամ այն երկրի ու ժողովրդի ցանկությունից: ԵՎ որպեսզի տեղ գտնենք այդ առաջընթացում, մենկ պետք է լինենք առաջատարների շարքում: Ինչպես ցույց են տվել տարբեր մրցույթներ հայկական կազմակերպությունները իրենց նախագծերի նորությամբ, կատարման մակարդակով գտնվում են ամենաառաջատար դիրքերում, որի մասին վկայում են համաշխարհային մրցույթներում զբաղեցրած նրանց առաջատար դիրքերը:

Բարձր տեխնոլոգիաները դժվար է պատկերացնել առանց արդի էլեկտրոնիկայի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների (ԻՏ) կիրառման: Կան լայն սպառման արտադրատեսակներ, որոնք լինելով ԲՏ-ական, իրենց պարզությամբ և քանակական պահանջվածությամբ ապահովում են այնքան ցածր գին, որոնց հետ մրցակցելը մեր ունեցած ռեսուրսների պայմաններում կարծում եմ անհնար է: Մինչ դեռ խելոք սարքերը, որոնք ստեղծվում և պատրաստվում են գիտելիքի հիման վրա ունեն մրցակցային մեծ պոտենցիալ: Պակաս կարևոր չէ ժողովրդի մենտալիտետի հարցը: Սրանով է հիմնավորվում ԲՏ-ական արդյունաբերության զարգացման անհրաժեշտությունը Հայաստանում:

ՌԱ-ը հիմնված է ամբողջապես ԲՏ-ի վրա: Կունենանք ԲՏ՝ կունենանք ՌԱ: Հայաստանի պայմաններում դրանք անբաժան հասկացողություններ են:

ՌԱ ասպարեզում մրցակցելու համար անհրաժեշտ է հեղափոխական մոտեցում ժամանակակից տեխնոլոգիական, արտադրական, հետազոտական հենք ստեղծելու, մասնագետների պատրաստման և համապատասխան գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման ասպարեզում: Դրան է ուղղված ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության համապատասխան որոշումները և ընդունած ՌԱ վերաբերյալ օրենքը:

ՌԱ զարգացման գրավականը կլինի արդյունքների առևտրայնացումը, քանզի այն ծախսատար է, և հիմնվելով միայն ներքին պահանջների վրա մենք չենք կարողանա ապահովել մրցունակության բարձր մակարդակ: ԵՎ որպեսզի այն կայանա պետք է նրա արտադրանքը դառնա արտաքին առևտրի մի մաս:

Այն կարծիքը, որ մենք փոքր երկիր ենք և չենք կարող շուկա հանել հատուկ միջոցներ, մեր կարծիքով չի համապատասխանում իրականությանը: Ոչ թե չենք կարող, այլ մինչ այժմ մեր առաջ չենք դրել համապատասխան խնդիր: Փոքր երկրներ են Շվեյցարիան, Դանիան, Իզրայելը: Շվեյցարիան հայտարարելով իր չեզոքության մասին ոչ մի րուպե չի դադարեցրել զարգացնելու ՌԱՆ, դարձնելով այն իր եկամուտների հիմնական աղբյուրներից մեկը: Իսրայելը լինելով մշտական պատերազմական վիճակում իր տնտեսությունը կազմակերպել է հենց պատերազմի տնտեսության հիման վրա, չմոռանալով ազգային անվտանգության կարևորագույն հարցերը կապված գյուղատնտեսության և այլնի հետ: Այժմ Իսրայելը դարձել է ռազմական տեխնիկայի վաճառքի ասպարեզում կարևոր երկրներից մեկը (հասցնելով տարեկան ծավալը մոտ 7մլրդ դոլարի): Իսրայելը բացի նորը ստեղծելուց ակտիվորեն զբաղվում է հնի արդիականացմամբ:

Այսօր Հայաստանը իր ընդունած որոշումներով կարծես կատարել է ընտրություն ի օգուտ ԲՏ-ի և ՌԱ-ն: «Կարծես» բառը պայմանավորված է նրանով, որ որոշումը բացի հայտարարությունից պետք է պարունակի նաև խրախուսող որոշակի քայլեր, որոնք կստեղծեն համապատասխան պայմաններ այդ տնտեսությունը զարգացնելու համար: Դրանք կարող են լինել հարկային, մաքսային և վարկային պարզեցված մեխանիզմներ այդ ճյուղի զարգացման համար: Պետք է մեկ անգամ ևս նշեմ, որ ԲՏ-ի ուղղությունը միայն ինֆորմացիոն տեխնոլոգիաները (ԻՏ) չեն: ԻՏ-ն կազմում է ընդհամենը դրա մի մասը: ԲՏ-ի զարգացումը հնարավորություն կտա զարգացնելու երկակի նշանակության տեխնիկական միջոցների ստեղծումն ու արտադրությունը, որը համապատասխան ներկայացման դեպքում պահանջարկված կլինի աշխարհում:

Այսպիսով, եթե սահմանելու լինենք ռազմական տնտեսությունը՝ արդյունաբերությունը, ապա այն կարելի է բաժանել չորս հիմնական ուղղությունների՝

1. Համալիրների, տրամաբանորեն ավարտուն ամբողջական սարքերի և սարքավորումների մշակում (արտոնագրերի ձեռք բերում) և դրանց արտադրում,
2. Առանձին հանգույցների, կոմպոնենտների մշակում և/կամ արտոնագրերի ձեռք բերում ու արտադրում,
3. Տեխնիկայի շահագործում և սպասարկման գործիքների ստեղծում, պատրաստում,
4. Համապատասխան միջոցների ստեղծման, արտադրման և շահագործման ապահովման համար մասնագետների պատրաստում:

Բոլոր բերված ուղղությունները ենթակա են առևտրայնացման, որն էլ իր հերթին պահանջում է նորամուծություններ նշված ասպարեզներում:

Վերը նշված 4 ուղղություններով աշխատում են մի շարք ձեռնարկություններ, որոնք իրականացնում են այսօրվա պահանջները բավարարող նորագույն տեխնիկայի ստեղծում, եղածների նորացում և շահագործում և փորձում են նորամուծությունների միջոցով առևտրայնացնել իրենց կարողությունները:

Այդ ձեռնարկություններից շատերը ԵՎրոպական և Ասիական երկրների ձեռնարկությունների պահանջով ստեղծել և առաքել են միջազգային և/կամ գինվորական ստանդարտներին բավարարող՝

- տարբեր հաճախականային տիրույթներում աշխատող ռադարներ, որոնք ցուցադրվել են միջազգային ցուցահանդեսներում ու հիմա էլ վաճառվում են պատվիրատու ձեռնարկությունների կողմից տարբեր երկրներում,
- օպտիկական, լազերային միջոցներ, որոնք թույլ են տալիս հայտնաբերելու հակառակորդի օպտիկական միջոցները և վերացնելու դրանք,
- օպտիկամեխանիկական և ջերմային տեսա համակարգեր, որոնք կարող են մրցակցել միջազգային շուկայում,
- ռադիո և լարային կապի միջոցներ, որոնք այսօր օգտագործվում են մեր բանակում ազատելով երկրին դրանց ներկրման անհրաժեշտությունից,
- տարբեր նշանակության ակումուլյատորներ, որոնք արդեն գրավել են հայկական շուկան և սկսել են տարածվել հարևան երկրներում նույնպես,
- Ռադիոտեխնիկական միջոցներ, որոնք կիրառվում են ռադիո հետախուզական և հակառակորդի կապը խլացնելու ասպարեզում,
- անօդաչու թռչող սարքեր, որոնք օգտագործվում են հայկական բանակում, վաճառվում են Թայվանում, Սինգապուրում,
- ավտոմատ կառավարվող, ռոբոտացված զենքի տեսակներ, որոնք այժմ գտնվում են փորձարկումների փուլում,
- մշակվում, պատրաստվում և 100 տոկոսով արտահանվում են կոմպոնենտներ, ֆունկցիոնալ հանգույցներ և պահեստամասեր, որոնց թվին են պատկանում սափֆիրից և այլ բյուրեղներից պատրաստվածքները, տարբեր տիպի միակցիչները, տվիչները (անկյուն-կող, ջերմաստիճանային, ճնշման, ջրածնի, այլ գազերի), ուղղաթիռների սարքավորումներ,
- տարբեր տիպի քիմիական միացություններ, սուսինձներ, հատուկ նշանակության ապակի,
- աշխարհի լավագույն օրինակների հետ մրցակցող մետաղների փնտրման սարքեր, որոնք արդեն ներ են դրված մեր բանակում,
- ստեղծվել է և արտադրվում է ռազմամթերք, հոթիրներ, ականներ, ռումբեր,
- ԻՏ- ասպարեզում ստեղծված են ինֆորմացիոն անվտանգություն ապահովող, քարտեզագրման և պատկերների ճանաչման, տեխնիկական միջոցների և օբյեկտների ավտոմատ կամ ավտոմատացված կառավարման համակարգեր:

Թվարկածը այսբերգի միայն երևացող մասն է:

Համալիրների, տրամաբանորեն ավարտուն ամբողջական սարքերի և սարքավորումների մշակում (արտոնագրերի ձեռք բերում) և դրանց արտադրում ուղղությունը ամենա գիտատարն է և վաճառքի դեպքում ստեղծում է ամենամեծ հավելյալ արժեքը և հետևաբար ապահովում է մեծ ֆինանսական օգուտ: Հայաստանում կա փորձ նման համակարգերի ստեղծման ասպարեզում, բայց չկա շուկաներում հանդես գալու փորձ: Այստեղ նպատակահարմար կլինի սկզբնական շրջանում կապեր հաստատել բարեկամ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ, որոնք արդեն ունեն ճանաչում և փոխշահավետ սկզբունքներով հանդես գալ արտաքին շուկաներում: Այստեղ խոսքը գնում է ռադարների օպտիկական և լազերային համակարգերի, ավտոմատ և /կամ ավտոմատացված կառավարումով համակարգերով զենքերի տեսակների, անօդաչու սարքերի մասին: Հետաքրքիր և օգտավետ կարող է լինել նաև գործընկեր կազմակերպությունների ստեղծած համակարգերի արտադրության կազմակերպումը Հայաստանում և արդեն որպես հայկական արտադրանք դրանց համատեղ շուկա հանելը:

Հատուկ նշանակության արդի արտադրատեսակներ ստեղծելը կապված է բազմաթիվ ճշգրիտ էլեմենտների ձեռք բերման հետ, որոնք շատ հաճախ անհասանելի են գործող օրենքների, աշխարհակալ երկրների կողմից սահմանված և կիրառվող կարգերի շնորհիվ: Բայց դա միայն դժվարեցնող է, սկզբնական շրջանում ծախսատար, իսկ հետագայում նույնիսկ օգնող, և կարող է հաղթահարվել համապատասխան գիտատեխնիկական և տնտեսական քաղաքականության միջոցով, ստեղծելով նոր ուղղություններ և բացելով նոր շուկաներ:

Առանձին հանգույցների, կոմպոնենտների մշակում և/կամ արտոնագրերի ձեռք բերում ու արտադրում ուղղությունը ունի ոչ պակաս կարևորություն: Այսօր ամբողջ աշխարհով վաճառված է մեծ թվով տարբեր տեսակի և բարդության համալիրներ, սարքեր, սարքավորումներ: Իսկ դրանք, ինչպես և ցանկացած սարք ունեն կյանքի տևողություն և ենթակա են ըստ ժամկետի պլանային նորով փոխարինման: Այստեղից բխում է կոմպոնենտների արտադրության կազմակերպման նպատակահարմարությունը, որը միշտ կարող է ունենալ իր շուկան: Առաջին հայացքից դա թվում է շատ պարզ աշխատանք, բայց իրականում, որոշ դեպքերում, այն համադրելի է համալիրների նախագծման հետ:

Նման պահանջարկված արտադրանքի շարքին է դասվում ծախսվող նյութերի և բաղադրիչ միջոցների արտադրության կազմակերպումը, որի առևտրայնացումը ավելի պարզ բնույթ է կրում: Դրանց առևտրայնացումը կապված է միայն վերջիններիս որակի և գնի հետ, որի նվազեցմանը կարելի է հասնել բարձր արտադրադականության նոր տեխնոլոգիաների ներդրմամբ: Այս ասպարեզը կանգնած չէ իր տեղում և շատ հաճախ

զարգանում է ավելի արագ քան համակարգերինը: Եվ դա դնում է պահանջներ նոր էլեմենտային հենքի անցման վրա:

Հայաստանը այսօր արտադրում է մոտ 100 անվանատեսակ բաղադրիչներ, որոնք առաքվում են Ռուսաստանի Դաշնություն: ԽՍՀՄ տարիներին դրանց թիվը գերազանցում էր մի քանի հազարը: Այս ասպարեզում լուրջ հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել պայմաններ տեխնոլոգիական կենտրոնների կազմակերպման համար և պատրաստել բարձր մակարդակի տեխնոլոգներ, որոնք կոչված կլինեն կազմակերպելու մրցունակ արտադրություն:

Տեխնիկայի շահագործում և սպասարկման գործիքների ստեղծում, պատրաստում ուղղությունը զարգացող է և ունի իր յուրահատկությունները և գիտելիքների ոլորտը: Գիտելիքներ, որոնք ձեռք են բերվում ամենօրյա գործնական փորձով և ուղեկցվում է համապատասխան գործիքների ստեղծմամբ, որոնք պարզեցնում և հեշտացնում են շահագործման աշխատանքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովետական (ռուսական) զենքը վաճառված է շատ երկրների, և Հայաստանում էլ օգտագործվում է հիմնականում ռուսական տեխնիկա, ապա դրանից հետևում է վերջիններիս սպասարկման փորձի առկայությունը և դրա առևտրականացման հնարավորությունը:

Հայկական բանակի հաղթանակները, որոնց ընթացքում ցույց է տրվել ոչ միայն քաջություն, այլ նաև գիտելիքներ կապված օպերացիաների պլանավորման և իրականացման, տեխնիկայի օգտագործման, շահագործման, արագ վերանորոգման հետ հիմք են հանդիսանում այդ գիտելիքների առևտրականացման համար: Այստեղ արդեն կառավարության կողմից սկսվել են տարվել համապատասխան աշխատանքներ այդ ասպարեզում կապված ռուսական 102-րդ բանակի տեխնիկայի Հայաստանում վերանորոգման կազմակերպման հետ: Եվ համապատասխանաբար պետք է փորձ արվի ընդլայնելու դրա աշխարհագրությունը համապատասխան միջազգային պայմանագրերի ստորագրման միջոցով, ըստ որի այլ երկրներից այստեղ վերանորոգման ուղարկվեն տարբեր տեխնիկական միջոցներ: Կարելի է նաև ձևավորել վերանորոգող մասնագիտական խմբեր արտագնա, տեղում համապատասխան աշխատանքները կազմակերպելու համար: Կազմակերպման ձև կարող է հանդիսանալ նաև հայկական համապատասխան շահագործող ձեռնարկությունների ստեղծումը այլ երկրներում, որտեղ կարելի կլինի օգտագործել և սփյուռքի ներուժը:

Համապատասխան միջոցների ստեղծման, արտադրման և շահագործման ապահովման համար մասնագետների պատրաստում ուղղությունը նույնպես ենթակա է առևտրականացման:

Ռազմական տեխնիկան իրենից ներկայացնում է մի կողմից շատ պարզ մյուս կողմից շատ բարդ համալիրներ, որոնց տիրապետումը հնարավորություն է տալիս առավելագույնս օգտագործել վերջիններիս հնարավորությունները: Այստեղից հետևում է դրանց տիրապետելու անհրաժեշտությունը: Այդ գիտելիքները իրենց հերթին ապրանք են, որոնք ենթակա են առևտրայնացման:

Ունենք ռազմական ինստիտուտ և ակադեմիա: Ռազմական մասնագետների պատրաստման կուրսակաժ փորձի առևտրականացումը առաջարկվում է իրականացնել այլ երկրներից համապատասխան ունկնդրողների ներգրավմամբ և մասնագետների պատրաստմամբ, որը պետք է իրականանա պետության անմիջական օգնությամբ համապատասխան երկկողմ պայմանագրերի սահմաններում: Վերջինս դնում է լուրջ պահանջներ դասախոսական կազմի և սպասվելիք ունկնդիրների կենցաղային պայմանների վրա:

Ինչպես արդեն նշվեց այսօր Հայաստանում ստեղծվել են տարբեր նշանակության համալիրներ, որոնք ցույց են տվել իրենց մրցակցային հատկանիշները և հնարավորությունները դուրս գալու համաշխարհային շուկա: Ինչպես ցույց է տալիս փորձը՝ ցանկացած խնդիր առաջադրելիս պետք է գնահատվի դրա լուծման հնարավորությունը, որը պայմանավորվում է երեք հիմնական գործոններով.

1. Խնդիրը լուծողների գիտելիքները, կարողությունները և հնարավորությունները
2. Գոյություն ունեցող տեխնիկական և տեխնոլոգիական հենքը,
3. Անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Այսպիսով առաջնահերթ առաջ է քաշվում գիտելիքների և կարողությունների ձեռք բերման, և հնարավորությունների ստեղծման հարցերը:

Հայաստանի կրթական համակարգը պետք է անցնի լուրջ արդիականացում սկսած դպրոցից և կրթության նկատմամբ վերաբերմունքի դաստիարակումից: Համոզված եմ, որ ավագ դպրոցը ավարտողը պետք է ունենա որոշակի պրոֆեսիոնալ տեխնիկական կամ այս կամ այն ասպարեզի մասնագիտություն: Դա կոզնի ավելի ճիշտ կատարել հետագա մասնագիտության ընտրություն:

Հայաստանը ունի որոշակի ներուժ, բայց այն ենթակա է լրացման, որին էլ կարելի կլինի հասնել մասնագետների, համալսարաններում ուսուցանող երիտասարդների համապատասխան մոտիվացմամբ:

Կարևորվում է անընդհատ ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը:

Այստեղ ոչ պակաս կարևոր է ժամանակակից բարձր ճշտության և արտադրողականության արտադրության միջոցների և դրանց շահագործողների առկայությունը:

Ունեցած տեխնիկական միջոցները հին են և ենթակա են նորացման: Այս ասպարեզում անհրաժեշտ է վերանայել տեխնոլոգիական սարքավորումների ձեռք բերման խրախուսման օրենսդրական միջոցները:

Նորարարական նախագծեր

Հայաստանում ձևավորված է՝

- Տարբեր տիպի միակցիչների արտադրության կուլտուրա: Դրանք պահանջարկված են շուկայում: Այստեղ կարևոր է զարգացնել հատուկ միակցիչների արտադրանքը, քանի որ պարզ և մեծ տարածում ստացած միակցիչների շուկայում դժվար կլինի մրցակցել համաշխարհային խոշոր արտադրողների հետ: Առաջարկվում է զարգացնել այդ ուղղությունը դեպի գերբարձր հաճախականային (ԳԲՀ) և ազդանշանային համալիր միակցիչների արտադրություն, որոնք իրենց տեղը կարող են գտնել տարբեր ասպարեզներում:

- ԳԲՀ տարբեր սարքերի (ֆիլտրեր, գումարիչներ, բաժանիչներ, կամրջակներ, ճյուղավորիչներ և այլ սարքեր, պտտական անցումներ) նախագծման և արտադրության կուլտուրա: Նման սարքավորման ստեղծումն ու արտադրությունը իրենից ներկայացնում է բարձր տեխնոլոգիական գործընթաց, որը հատուկ է զարգացած երկրներին: Այս ասպարեզի հայկական արտադրանքը տարբեր ժամանակներ ունեցել է իր շուկաները ռուսաստանի, եվրոպական երկրների, արաբական և չինական շուկաներում: Այստեղ կարևորվում է նոր նյութերի ստեղծման և դրանց օգտագործման հարցերը:

- Ռադիոտեխնիկական և անտենային համակարգեր: Այստեղ մշակված տարբեր նշանակության անտենային համակարգերը գտել են շուկաներ ՌԴ-ում, Եվրոպայում, արաբական երկրներում: Դրանց ճիշտ ներկայացումը կարող է Հայաստանի համար բացել չինական շուկան:

- ԽՍՀՄ-ում Հայաստանը հայտնի էր անտենաների չափումներով: Համապատասխան ներդրումների դեպքում կարելի է վերականգնել այդ ուղղությունը և շուկաները նույնպես:

- Լազերային տեխնիկական մի ուղղություն է, որը զարգացել է դեռ ԽՍՀՄ- ի առաջ կանգնած խնդիրների լուծման արդյունքում: Այսօր այդ ասպարեզը խիստ պահանջված է և ձեռնարկություններում մշակված համակարգերը իրենց շուկաներն են գտնում աշխարհի տարբեր երկրներում:

- Կապի միջոցների շուկան շատ պահանջարկված է և դժվարին: Հանդիսանալով տեխնոլոգիաների արտացոլման կիզակետ, այս ասպարեզը դարձնում է խիստ մրցակցային: Այստեղ կատարվում են լուրջ աշխատանքներ, որոնք պահանջում են մեծ ներդրումներ: Հիմա այս ասպարեզում Հայաստանը կարող է ներկայանալ նոր նախագծերով:

- Սարքաշինության ասպարեզը զգայուն է և ցույց է տալիս երկրի զարգացածության աստիճանը: Այս ասպարեզում կան ձեռնարկություններ, որոնք արտադրում են չափիչ սարքեր, տվիչներ, կատարող հանգույցներ, որոնք արտահանվել են ոչ միայն ԱՊՀ երկրներ: Այստեղ շուկան շատ զգայուն է և պահանջում է գնորդների պահանջներին և հարցումներին արագ և համարժեք պատասխան: Շատ հաճաճ լուծումը հնարավոր է տալ մի քանի օրում, բայց համապատասխան թույլատրությունների ստացումը և դրա առաքումը պահանջում են ամիսներ: Դրա հետ կապված պետք է վերանայել կոմպոնենտների ներկրման կանոնակարգերը:

- Ռոբոտաշինության շուկան զարգացող է: Այն փաստը, որ դպրոցներում ստեղծված են ռոբոտաշինության լաբորատորիաներ ասում է այն մասին, որ Հայաստանը հեռու չէ այստեղ լավագույնների շարքում լինելուց: Կան մշակումներ, որոնք իրենց շուկաներն են գտել արևելյան երկրներում:

- կոմպոզիցիոն նյութերի արտադրության ասպարեզում հայաստանում ստեղծված են ձեռնարկություններ և կատարվում են լուրջ աշխատանքներ: Աշխատանքների ճիշտ կազմակերպման դեպքում դրանք կարող են դառնալ տարածաշրջանային կենտրոններ:

- Հայաստանում գործում են այնպիսի գիտահետազոտական կենտրոններ, ինչպիսիք են «Քենդել» արագացուցիչը, Ֆիզիկայի ազգային կենտրոնը, ՀՀԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների կենտրոնը և այլ կենտրոններ, որոնք ունեն նյութերի հետազոտությունների անցկացման մրցունակ հենք: Կան նաև այլ կենտրոններ, որտեղ մշակվել են նոր նյութեր, որոնք այսօր էլ արտահանվում են երկրից: Նոր նյութերի ստեղծումը միշտ եղել է բոլոր երկրների համար առաջնություն և այդ առումով ճիշտ կլինեք վերականգնել նյութաբանության ինստիտուտը դնելով նրա առաջ արդի խնդիրներ:

- Տարբեր տիպի բյուրեղների աճեցման ասպարեզում Հայաստանը ունեցել է լուրջ հաջողություններ, ստեղծված է եղել ճանաչված դպրոց, որի աշակերտների անմիջական միջոցներով նման ճյուղեր են ստեղծվել Չինաստանում, Լրոպական երկրներում Ռուսաստանում: Բյուրեղների աճեցման ասպարեզում հիմա էլ կատարվում են փորձեր (Սաֆֆիրի, լազերային այլ բյուրեղների աճեցման) բայց այստեղ մրցակցությունը շատ բարձր է և պահանջվում է լուրջ շուկայական հետազոտություններ, մինչ դեռ մեծ պահանջարկ ունի բյուրեղների մշակումը, որի ասպարեզում Հայաստանը ունի մեծ ներուժ:

- Անօդաչու թռչող սարքերը (ԱԹՄ) ձեռք են բերում նոր շուկաներ: Առաջարկվում է նախագծել և արտադրել մեծ չափերի ԱԹՄ-ներ, որոնք կարելի կլինի օգտագործել գյուղատնտեսության մեջ նաև: Համաձայն մեր նախնական դիտարկումների այն կարող է գտնել շուկա նաև դրսում: Կարևոր է նաև այլ տեսակի ԱԹՄ-ների արտադրումը: Այն այսօր համարվում է նաև ռազմական գործողությունների կազմակերպման արդի միջոց:

Հայաստանում նման ներուժ կա, որի մասին են վկայում ամենամյա ավիացիոն ցուցահանդեսները:

- Հրթիռաշինությամբ Հայաստանում զբաղվում էին դեռ պիոներական պալատում: Պահպանվել են մասնագետներ, որոնք կարող են նոր ուժ տալ այդ ուղղությանը, մասնավորապես հետաքրքիր է փոքր հեռավորության հրթիռների զարգացման ուղղությունը, քանի որ դրանք համարվում են «ծախսվող նյութ» և դրա պահանջը շուկայում համեմատաբար մեծ է:

Առաջնահերթ խնդիրներ

Տնտեսության զարգացման կարևորագույն խնդիրներից է արտադրական ձեռնարկությունները շրջանառու միջոցներով ապահովելը: Այդ հարցում կարևորագույն դերը պետք է կատարեն բանկերը և տնտեսական օրենքները: Բայց այստեղ ունենք լուրջ խնդիրներ: Այս ասպարեզի ձեռնարկությունների իրական շահութաբերությունը դեռևս չի գերազանցում 10-15%-ը: Բանկերի վարկային տոկոսը հասնում է տարեկան 18-24%-ի: Այդ պայմաններում ակնհայտ է դառնում, որ այսօրվա բանկերի քաղաքականությունը չի կարող նպաստել արդյունաբերական տնտեսության զարգացմանը:

Տնտեսությանը խթան կարող էր հանդիսանալ Լիզինգային գործողությունների կատարման հնարավորությունը, մինչ դեռ այն գործում է միայն մի քանի տեսակ գյուղատնտեսական մեքենաների և վերամշակման հոսքային գծերի ձեռք բերման դեպքում, այն էլ ոչ միշտ:

Կարծում եմ, որ համապատասխան ձեռնարկություններին տալով արտադրական կամ գիտաարտադրական անվանում և մտցնելով որոշակի հարկային նորամուծություններ բերված տիպերի աշխատանքը ակտիվացնելու համար, կբարձրացնեն վերջիններիս քաշը հասարակության մեջ, որն էլ կխթաներ դրանց զարգացմանը:

Հայաստանի տնտեսական օրենքները ստեղծվել են հիմնվելով զարգացած երկրներում գործող օրենքների վրա: Մինչդեռ տնտեսությունը զարգացնել նման օրենքներով, ինչպես ցույց են տվել վերջին 25 տարիները, շատ դժվար է: Կարևորում է մշակութային հասկացողությանը նորովի մոտեցումը: Տնտեսավարող սուբյեկտը, որը ուղղում է իր խնայած միջոցները նոր տեխնոլոգիաների ներդրմանը (հաստոցներ, չափիչ, կառավարող և հսկիչ գործիքներ, կատարող մեխանիզմներ և այլն) և աշխատատեղերի ստեղծմանը պետք է այդ չափով ազատվի շահութահարկից:

Փորձը ցույց է տվել, որ եթե այս կամ այն արտադրատեսակի նախագծման և արտադրության կազմակերպման համար պահանջվում է ո գումար, ապա շուկաների ուսումնասիրման, արտադրանքի առաջխաղացման համար պահանջվում է ավելի քան 2n

գումար: Դա ցուցահանդեսներին մասնակցելն է, գովազդային նյութերի տպագրությունն ու տարածումն է, տեսա ժապավենների պատրաստումն և այլն: Այստեղ հարկ է նշել, որ պետության կողմից ստեղծվել է զարգացման հիմնադրամ, որը կոչված է աջակցելու ձեռնարկություններին ցուցահանդեսներին մասնակցելու համար, իր վրա վերցնելով հնարավոր ծախսերի 50%-ը, և տրամադրվող վարկի 3%-ը:

Եզրակացություն

Շուկաներում մրցակցությանը դիմակայելու հիմնական պահանջներն են՝ ֆունկցիոնալ ամբոջականության ապահովում, էսթետիկական տեսքի (դիզայն) ապահովում, որակ և գին, համապատասխան քաղաքական աջակցություն պետության կողմից:

Առաջին երկուսը կապված են ստեղծողի և արտադրողի մակարդակից, ունեցած գործիքային հնարավորություններից և արտադրության կազմակերպման ու որակի վերահսկման ձևից:

Գինը այստեղ, իհարկե կարևոր է, բայց ոչ որոշիչ:

Չկա մի երկիր, որտեղ բարձր տեխնոլոգիական և գիտատար արտադրանքը էժան լինի: Եվ այդ իմաստով մենք ունենք մրցակցային հնարավորություններ, որոնց բացահայտումը և ուղեկցումը ունի հսկայական նշանակություն:

Ամեն մի նախագիծ, որը ենթակա է իրականացման իրենից ներկայացնում է առանձին՝ տեղական մարտահրավեր: Այդ մարտահրավերներին դիմակայելու, առաջադրված խնդիրները լուծելու համար, ինչպես արդեն վերը նշվել է, առաջնահերթ տեղ է զբաղեցնում բանիմաց մասնագետների պատրաստման հարցը: Կարևորվում է տեխնիկական ասպարեզներում մասնագիտությունների հեղինակության բարձրացումը, ուսմանը տեխնոլոգիակն ուղղվածություն տալը: Այդ առումով հսկայական աշխատանք ունեն կատարելու ինժեներական բուհերը, որոնք պետք է դառնան նորագույն տեխնոլոգիաների, նյութերի և տեխնիկայի ստեղծման ու ներդրման դրոշակակիրները: Անհրաժեշտ է վերանայել ուսումնական ծրագրերը, դասախոսների գիտական և ուսումնական բեռնվածությունները:

Ճիշտ կլիներ մեկ անգամ ևս անդրադառնալ ինժեներական բուհերում ռազմական ամբիոնների ստեղծմանը, որը կբարձրացներ պատրաստվող մասնագետների որակը:

Միև Մարկոսյան

«Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի» (ԵրԿՄԳՀԻ) տնօրեն